ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Էքսպեր. և կլինիկ. բժշկ. հանդես

V, № 1, 1965

Журн. экспер. и клинич. медицины

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Հոգու մեծ արիություն պահանջող, ստեղծագործական աշխատանքի ազնիվ ու վեհ ճանապարհ է անցել Հայաստանի բժշկական գիտության և առողջապահության գործի վետերան Լևոն Հովհաննիսյանը։



Պատմել նրա կյանքի մասին՝ նշանակում է թերթել մեր ռեսպուբլիկայում բժշկական գործի զարգացման մոտ 45 տարիների պատմությունը։ Բայց դա էլ դեռ քիչ է։ Հարկավոր է ավելի հեռվից սկսել. Լևոն Հովհաննիսյանը ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել նաև նախասովետական շրջանի հայ բժշկական կյանքին՝ սկսած 1909 թվականից։ Այդ թվականին, ավարտելով Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետը, նա աշխատանքի է անցնում նախ՝ Թիֆլիսում, այնուհետև՝ Ալավերդում և Անդրկովկասի այլ վայրերում։ Արդեն այդ տարիներին Լ. Հովհաննիսյանը ճանաչման ու հարգանքի է արժանանում՝ բնակչության մեջ տարածված համաճարակային հիվանդությունների դեմ ակտիվորեն պայքարելու համար։ Երիտասարդ բժիշկը մեծ ուշադրություն էր նվիրում նաև սնոտիապաշտության և խավարի մեջ խարխափող ժողովրդի շրջանում սանիտարական գիտելիքների տարածման գործին։ Այդ տարիներին նա հատկապես ակտիվ գործունեություն ծավալեց Կովկասյան բժշկական ընկերությունում, որտեղ հանդես էր գալիս երկրամասային ախտաբանության տարբեր հարցերի, ինչպես նաև հայ բժշկության պատմության վերաբերյալ արժեքավոր զեկուցումներով։

Դժվար էր հայ բժշկի, հատկապես գիտությանը ծառայելու ազնիվ ձգտումներով տոգորված մասնագետի վիճակը։ Այդ գործի համար չկային ամենատարրական հնարավորություններ։

Շատ տաղանդավոր մարդիկ խորտակեցին իրենց վեհ ձգտումները և ազնիվ ցանկությունները՝ չգտնելով միջոցներ գիտական հետազոտություններ կատարելու համար։ Հիշենք խիզախ մտքի և պայծառ հոգու տեր հայ բժիշկ Մարգար Առուստամյանին, որը աշխարհում առաջին անգամ, բելգիացի գիտնական Վան Էրմենհեմից շատ առաջ հայտնաբերեց ձկան թույնի (բոտուլիզմի) հարուցիչը, սակայն հնարավորություններ չունենալով փորձառական մի-

ջոցներով հաստատել իր հիպոթեզը, զոհ դարձավ հարստանալու մոլուցքով տարված ձկնարդյունաբերողներին։

Դժվար է պատկերացնել, թե ինչպես կընթանար երիտասարդ բժիշկ Լևոն Հովհաննիսյանի կյանքի ճանապարհը, եթե Հայաստանում չստեղծվեին սովետական կարգեր։ Շատ-շատերի հետ, Լևոն Հովհաննիսյանի հանրօգուտ աշխատանքի համար նույնպես, աննախընթաց հնարավորություններ ստեղծվեցին Հայաստանը սովետականանալուց հետո։

Ծանր տարիներ էին հայ ժողովրդի կյանքում։ Հրից ու սրից դեռ նոր մաղապուրծ եղած ժողովուրդը խարխափում էր սովի ու աղքատության, վշտի ու կարիքի մեջ։ Դաժան համաճարակներն էլ իրենց հերթին էին հնձում մահվան վիհին հասած ժողովրդին, անարգել տարածված լինելով երկրում։ Հարկավոր էին անձնազոհ մարդիկ, որպեսզի ոտքի հանեին հարազատ ժողովրդին՝ պայքարելու խավարի ու համաճարակների դեմ, ետ մղեին մահը։ Դրանց թվում էր բժիշկ Լևոն Հովհաննիսյանը, որը շտապեց Հայաստան՝ հարազատ ժողովրդին անձնվիրաբար ծառայելու համար։ Ապարդյուն էին նրա «ինտելիգենտ» մի քանի կոլեգաների հորդորները՝ մնալ «եվրոպական քաղաքների գիտական շրջաններում»։ Լևոն Հովհաննիսյանին գայթակղում էր վերածնված ժողովրդի ստեղծագործական եռուզեռին մասնակից դառնալու դժվարին, սակայն ռոմանտիկայով առլեցուն կյանքը։ Եվ նա եկավ Երևան, որտեղ գտավ Նոյեմբերով գոտեպնդված մի նոր երկիր։ Սկսվեցին երիտասարդ էնտուզիաստ բժշկի ստեղծագործական կյանքի բուռն տարիները։

Սոսկ բուժական, նեղ միջոցառումներով ոչինչ չէիր անի՝ ցարական մռայլ տարիներից ժառանգություն մնացած համաճարակների, անոտիպաշտության և խավարի դեմ կռվելու համար։

Լևոն Հովհաննիսյանն այնտեղ էր, ուր ավելի շատ էին նրա կարիքը զգում։ Նա առանձնապես մեծ ջանքեր էր գործադրում՝ բնակչության դարերով մեծ չարիք պատճառող մալարիայի դեմ պայքարի գործում։ Եթե հիշենք, որ նախասովետական Հայաստանում երեք բնակչից երկուսը հիվանդ էր մալարիայով, դժվար չէ պատկերացնել, թե բժշկության այս բնագավառը ինչպիսի համառ և տևական աշխատանք էր պահանջում։ 1921 թվականին, Հայաստանի բժիշկների առաջին համագումարում, կազմվեց մալարիայի դեմ պայքարող հատուկ հանձնաժողով՝ Լ. Հովհաննիսյանի նախագահությամբ։ 3 տարի անց Երևանում բացվեց մալարիաբանության գիտահետազոտական ինստիտուտ՝ բժշկական ինստիտուտների առաջնեկը Հայաստանում։ Այդ ինստիտուտի ստեղծման գործում խոշոր ավանդ ունեցավ Հովհաննիսյանը, որը երկար տարիներ որպես կոնսուլտանտ էր աշխատում այնտեղ։ Մեկը-մյուսի ետևից հրատարակվեցին ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածուները, որոնք վկայում էին մալարիաբանության և պարազիտաբանության բուռն զարգացումը նախկինում գիտական հիմնարկներից միանգամայն զուրկ Հայաստանում։

Դժվար է մեկառմեկ թվարկել այն բոլոր բժշկական կազմակերպությունները, գիտական հիմնարկները և ընկերությունները, առողջապահական մասսայական միջոցառումները, որոնց ակտիվորեն մասնակցել, ղեկավարել է Լևոն Հովհաննիսյանը՝ իր գիտա-բժշկական գործունեության 55 տարիներին։

... 1923 թվական։ Իրականացավ հայ բժիշկների վաղուց փայփայած, նվիրական իղձը. Երևանի պետական նորաստեղծ համալսարանում բացվեց

բժշկական ֆակուլտետ։ Հանգուցյալ պրոֆեսորներ Վահան Արծրունու, Գրիգոր Արեշյանի, Քեշեկի և մյուսների հետ, Լևոն Հովհաննիսյանը ակտիվ մասնակցություն է ունենում այդ ֆակուլտետի ստեղծմանը։ Նա ստանձնում է ներքին հիվանդությունների պրոպոդևտիկայի ամբիոնի վարիչի պաշտոն։ Շուրջ 42 տարի Հովհաննիսյանն այդ ամբիոնի անփոփոխ ղեկավարն է։ Այդ երկար տարիների ընթացքում ամբիոնը դարձել է ներքին հիվանդությունների գծով գիտության հզոր կենտրոն, որտեղ մշակվել են բժշկագիտական շատ բարդ և մեծարժեք պրոբլեմներ։ Այս ամբիոնում է կոփվել ներքին հիվանդությունների մասնագետների մի ամբողջ համաստեղություն, որոնցից շատերն այժմ Հայաստանում և նրա սահմաններից դուրս ճանաչված թերապևտ-պրոֆեսորներ են։ Դրանցից են գիտության վաստակավոր գործիչներ պրոֆեսոր Արսեն Սիմոնյանը և Վարդան Ավագյանը, բժշկական գիտությունների դոկտոր Զավեն Դոլաբջյանը, հմուտ սրտաբան դոցենտ Աննա Ֆարմանյանը, բժշկական գիտությունների թեկնածու Ֆրիքս Դրամբյանը և շատ ուրիշներ։

Ինչպես առնականանալով, մայր թռչունից ուժ առնելով, հեռուներն են ճախրում թռչունները, այնպես էլ Լ. Հովհաննիսյանի կողմից ղեկավարած ամբիոնից 40-ից ավելի տարիների ընթացքում գիտության հեռուներն են թռել նրա դաստիարակած աշակերտները, երբեք սակայն չմոռանալով իրենց հարգարժան, մեծ հոգու և գիտական հզոր էրուդիցիայի տեր ուսուցչին։

Մեծ են Լևոն Հովհաննիսյանի ծառայությունները մեր ռեսպուբլիկայում բժշկական գիտության, հատկապես ներքին հիվանդությունների վերաբերյալ գիտական մտքի զարգացման բնագավառում։ Դժվար է հիշել ներքին հիվանդությունների և նրա հետ անմիջականորեն առնչվող որևէ մասնաճյուղ, որտեղ իր ավանդը մուծած չլինի Լևոն Հովհաննիսյանը։ Այդ մեծ ծառայությունների համար պատահական չէ, որ նա ընտրվել է թերապևտների համամիութենական ընկերության պատվավոր անդամ։ Լևոն Հովհաննիսյանի գրած դասագրքերը երկար տարիներ բժիշկների և բժշկական ինստիտուտի ուսանողների սեղանի գրքերն են դարձել։

Այժմ էլ եռում է գիտական կյանքը Երևանի բժշկական ինստիտուտի ներքին հիվանդությունների պրոպոդևտիկայի ամբիոնում և նույնանուն կլինիկայում։ Հմուտ մասնագետի ղեկավարությամբ գիտական ուսումնասիրություններ են կատարում երիտասարդ մի խումբ բժիշկներ։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում բուժական գործի մի նոր բնագավառի՝ առողջարանային շինարարության սկիզբը դրվեց։ Դարերով աննպատակ հոսում էին Ջերմուկի և Արզնիի հանքային ջրերը, իսկ հիվանդը «Կարլսբադի աղ» էր երազում՝ բուժվելու համար։ Մարդիկ ի՞նչ իմանային, որ հեռավոր Չեխոսլովակիայի Կարլովո-Վարի հանքային ջրերին համանման հանքային ջրեր Հայաստանի լեռներում են հոսում, սակայն ապարդյուն կորչում անդնդախոր ձորերում։

Այժմ մեր երկրում լայնորեն հայտնի են Ջերմուկը և Արզնին՝ Հայաստանի առաջնակարգ սանատորիաները։ Այս երկու առողջավայրերի բուժական ազդակների առաջին ուսումնասիրողը, առողջարաններ ստեղծելու գիտական առաջին հիմնավորողը եղել է Լևոն Հովհաննիսյանը՝ իր կոլեգաների հետ։ Արդեն մի քանի տասնյակ տարի Հովհաննիսյանը զբաղվում է Հայաստանի հանքային ջրերի և առողջավայրերի ուսումնասիրությամբ։ Երկար տարիներ լինելով Արզնի առողջարանի մշտական կոնսուլտանտը, նա անփոխարինելի

ծառայություններ ունի այստեղի հանքային ջրերի՝ հատկապես հիպերտոնիկ հիվանդության բուժման ազդակների ուսումնասիրության գործում։

Լևոն Հովհաննիսյանի խմբագրությամբ լույս են տեսել գիտական բազմաթիվ աշխատություններ կուրորտաբանության տարբեր հարցերի վերաբերյալ։

Չկա կուրորտային գործի զարգացման մի որևէ խնդիր, որի լուծման գիտական հարցերում իր բանիմաց խորհուրդներով մասնակից չլինի Լևոն Հովհաննիսյանը։ Դժվար է մեկառմեկ խոսել մեծանուն բժշկի ու գիտնականի փառահեղ կյանքի բոլոր դրվագների մասին։ Սակայն նշենք դրանցից մի քանիսը։ 1937 թվականին Լևոն Հովհաննիսյանը պաշտպանում է դոկտորական դիսերտացիա, 1940 թվականին նրան շնորհվում է գիտության վաստակավոր գործչի կոչում, պատերազմի տարիներին նա մի շարք զինվորական հոսպիտալների կոնսուլտանտ էր, որի համար պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ 1943 թվականին նա ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, մեկ տարի անց՝ Սովետական Միության բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։ 1944 թվականին Լևոն Հովհաննիսյանի նախաձեռնությամբ Հայաստանի գիտությունների ակադեմիայում ստեղծվում է հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտոր, որը հսկայական գործ կատարեց ժամանակի փոշիներից մաքրելու և ի տես աշխարհի առաջավոր մարդկության ցուցադրելու հայ ժողովրդի բժշկական մտքի շողշողուն գանձերը։ Մեկը մյուսի ետևից լույս են տեսնում Լևոն Հովհաննիսյանի «Բժշկության պատմությունը Հայաստանում» ստվարածավալ 5 հատորները։

Դոցենտներ Խուրշուդ Մելիք-Փարսադանյանի, Արծրուն Կծոյանի, Ալեքսանդր Լալայանի և մյուսների աշխատակցությամբ հրատարակվում են նաև բժշկա-պատմագրական այլ աշխատություններ։ 1951 թվականին հրատարակվում է Լևոն Հովհաննիսյանի և մյուս հեղինակների «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը», որը կապիտալ աշխատություն էր և իր ծավալով ու մեկնաբանությունների հարստությամբ հավասարը չուներ մեզ մոտ մինչ այդ հրատարակված բժշկական բառարանների մեջ։

1954 թվականին Լ. Հովհաննիսյանը ընտրվում է Հայաստանի թերապևտների ընկերության նախագահ։ 1949—1951 թվականներին Լևոն Հովհաննիսյանը 3 անգամ մասնակցել է խաղաղության կողմնակիցների համամիութենական կոնֆերանսներին և ելույթ ունեցել այնտեղ։

Լևոն Հովհաննիսյանի անունը հայտնի է և առանձնապես սիրելի աշխարհի տարբեր երկրներում բժշկության պատմության հարցերով զբաղվող գիտնականների շրջանում։ Նա հաճախ է գրքեր և նամակներ ստանում Կուբայից, Իսպանիայից, Ֆրանսիայից, Չեխոսլովակիայից, որտեղ մարդիկ խորհրդակցում են նրա հետ, իրենց աշխատությունների մասին կարծիքներ խնդրում՝ բժշկության պատմության հմուտ մասնագետից։ Առանձնապես մեծ ժողովրդականություն է վայելում Լևոն Հովհաննիսյանի «Հայ բժշկության պատմության նկարագրումներ» ունիկալ ալբոմը, ինչպես նաև նրա «Հայ բժշկության պատմություն» աշխատությունը, որը վերջերս լույս է տեսել Ֆրանսերեն։ 1963 թվականին Լևոն Հովհաննիսյանին ընտրեցին բժշկության պատմության միջազգային ակադեմիայի իսկական անդամ։

Նա մասնակցել է Իսպանիայում ու Ֆրանսիայում հրավիրված բժշկության պատմության համաշխարհային կոնգրեսներին և հանդես եկել այնտեղ մեծարժեք զեկուցումներով։

Երբ մի քանի տարի առաջ Երևանում ստեղծվեց սրտաբանության և սրտի վիրաբուժության գիտահետազոտական ինստիտուտ, չնայած իր պատկառելի տարիքին, Լևոն Հովհաննիսյանը ստանձնեց այդ ինստիտուտի դիրեկտորի պաշտոնը։ Այժմ ինստիտուտը դարձել է սրտաբանության և սրտային վիրաբուժության հզոր կենտրոն, որտեղ նրա սկսած գործը շարունակում են նրա տաղանդավոր հետևորդները։

Ամբողջ սրտով ողջունելով հարգարժան բժիշկ և անխոնջ գիտնական Լևոն Անդրեևիչ Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակը, ցանկանանք նրան նորանոր հաջողություններ սովետական բժշկագիտության զարգացման գործում։

Ռ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ